## ՀԱՆԳԻՍՏ
## Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
## (1914—1985 թթ.)

1985 թվականի սեպտեմբերի 12-ին, կյանքի 71-րդ տարում, վախճանվեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Ստեփանյանը:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1914 թվականին Իրանի Փերիա գավառի Շուրիշկա գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում:

Մինչև 1970 թվականը զբաղվել է հողագործությամբ և միաժամանակ հայոց եկեղեցիներում մասնակցել եկեղեցական արարողություններին՝ որպես դպիր:

1970 թվականին ընտանիքով ներգաղթել է Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Հրազդան քաղաքում:

1971 թվականի օգոստոսի 1-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ գերաշնորհի Տ. Վահան եպիսկոպոս Տերյանի:

Սույն թվականի սեպտեմբերի 13-ին, ուրբաթ օրը, Հրազդանի շրջանի Աթարբեկյան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց և հանգուցյալի վերջին օծման կարգը կատարեց արժանապատիվ Տ. Արամ քահանա Բուաջյանը:

Հանգուցյալի մարմինն ամփոփվեց Հրազդանի քաղաքային գերեզմանատանը:

Հանգուցյալը համեստ և հավատավոր եկեղեցական էր:



Թող Աստված լուսավորի հանգուցյալ Տ. Մկրտիչ քահանայի հոգին: